

ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐ ՔՈՒՐՏՔԱՆՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Քերականություն, քերականական տերմին, ձեռագիր, ուսումնական ձեռնարկ, խոսքի մասեր, մանր հավելագրություններ, հնչյունաբանություն, ձևաբանություն, կետադրություն, չափածո երկ:

Հայ քերականական մտքի պատմությունը մեծ մասամբ ուսումնասիրված է. այս բնագավառում հիմնաքարային աշխատություններից է բազմավաստակ գիտնական Ն. Ադոնցի «Դիոնիսիոս Թրակացին և նրա հայ մեկնիչները»¹, որում նա, գիտական շրջանառության մեջ դնելով երկի հայերեն թարգմանության բնագիրը (Թրակացու քերականությունը երկար ժամանակ եղել է հիմնական դասագիրք բարձրագույն դպրոցների համար), վերականգնում է մեկնությունների կորսված հատվածները, կատարում վերականգնված բնագրերի քննություն, բացահայտում դրանց և հունական մեկնությունների ազգակցությունը:

Հաջորդ կարևոր աշխատություններն են՝ ակադ. Գ. Զահուկյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.)» և «Գրաբարի քերականության պատմությունը»², որոնցից առաջինում հեղինակը բացահայտում է հայ քերականների ժառանգությունը՝ ավանդված ձեռագիր մատյաններով, այնուհետև վերլուծում նրանց քերականագիտական հայացքները, իսկ երկրորդում ոչ միայն վերլուծում է Ժէ-ԺԸ. դդ. քերականությունները, այլև ամփոփում-ամբողջացնում իր կատարած ուսումնասիրությունների արդյունքները՝ առանձնացնելով գրաբարի քերականական կառուցվածքի ուսումնասիրման երեք շրջան՝ հունատիպ, լատինատիպ և ինքնատիպ:

Հայ քերականագիտության պատմության համար կարևոր են քերականների

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ք.գ.թ., ավագ գիտաշխատող, t.manukyan@matenadaran.am, հոդվածը ներկայացնելու օրը՝ 22. 02.2022, գրախոսելու օրը՝ 22.03.2022:

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, Ն. Ադոնց, երկեր, հ. Գ., քաղզմ. Օ. Վարդապետյան, Երևան, 2008:

² Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Երևան, 1954, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974:

և նրանց աշխատություններին՝ մեկից ավելի ձեռագրերի համագրմամբ կազմված համեմատական և քննական բնագրերը, դրանց հիման վրա կատարված ուսումնասիրությունները³, ինչպես նաև որոշակի քերականական երևույթների մասին գրված և բնագիր պարունակող հոդվածները: Այդուհանդերձ, գիտնականների ուսումնասիրության շրջանակներից դուրս են մնացել հեղինակներ և քերականություններ, մասնավորապես ուշ շրջանը ներկայացնող, որոնք նույնպես կարևոր են հայ քերականագիտության պատմության համար: Եվ այդ քերականներն ու աշխատություններն ի հայտ են գալիս հատկապես ձեռագրերի նկարագրման ժամանակ:

Այդպիսի մի հեղինակի՝ Խաչատուր Քուրտքանցուն և, մասնավորապես, նրա քերականությանն է նվիրված մեր աշխատանքը: Հեղինակի մասին տեղեկանում ենք ՄՄ 8706 ձեռագրից: Այն ինքնագիր է, մեզ հետաքրքրող «Քերականությունից» բացի կան նաև «Ի տէր Խաչատուր է սայ և ոգեալ» չափածո փոքրիկ ստեղծագործությունը, «Գիրք մականցութեան» աշխատությունը և հատվածական նյութեր իմաստասիրության, աստվածաբանության, ստուգաբանության վերաբերյալ: Ենթադրում ենք, որ հեղինակ-գրիչը նաև ծաղկողն է. ձեռագրում կա մի քանի անարվեստ, բայց հետաքրքրական մանրանկար, որոնց կանդապոնանք հրեթացս: Ձեռագրի գրչության ժամանակի և վայրի մասին մեզ տեղեկություններ են տալիս «Մականցության» և «Քերականության» տիտղոսաթերթ-հիշատակարանները (ՄՄ 8706, 2ա, 27ա): Հեղինակը գրում է, որ «Մականցությունը» շարագրել է 1770 թ. Խաստուր գյուղում, իսկ «Քերականությունը»՝ 1771-ին՝ գրչության վայրը չնշելով, բայց փոխարենը նշում է. «գրեցալ... ի հայրապետութեան սրբոյ էջմիածինայլ խորհրդական մօրս մերոյ եւ ի յառաջնորդութեան սրբոյ տանս մերոյ Ուզգլիսա սուրբ վանից...» (27ա): Ըստ բառարանային տվյալների՝ Խաստուրը⁴ գյուղ է Արևմտյան Հայաստանի էրզրում նահանգի Բայազետի գավառում, իսկ Ուզգլիսան⁵, որ նույն Ուշքիլիսա վանքն է,

³ Առաֆել Սիւնեցի, Յաղագս քերականութեան համառատ լուծմունք, աշխ. Լ. Խաչերեանի, Լոս Անճելոս, 1982, Դաւիթ Զէյթունցի, Մեկնութիւն քերականին, աշխ. Ե. Մեքոնյանի, Երևան, 1981, Նսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխ. Լ. Խաչերեանի, Երևան, 1966, Յովհաննէս Տրգնկացի, Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս Անճելոս, աշխ. Լ. Խաչերեանի, 1983, Յովհաննէս Մործորեցի, Համառատ տեսութիւն քերականի, աշխ. Լ. Խաչերեանի, Լոս Անճելոս, 1984, Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, բնագիրը հրատ. պատր. Լ. Խաչիկյանը, ներածությունը Լ. Խաչիկյանի և Ս. Ավագյանի, Երևան, 1977, Վառդան Արեւելցի, Մեկնութիւն քերականի, աշխ. Լ. Խաչերեանի, Երևան, 1972:

⁴ Թ. Հակոբյան, Սա. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Երկրորդ (Գ-Կ), Երևան, 1988, էջ 682, հմմտ. Հ. Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Երկրորդ, գիրք Ա (Թ-Կ), Վենետիկ, 1907, էջ 152-153:

⁵ Տեղանունների բառարան, հ. 5, էջ 198:

ևս գտնվում է այնտեղ: Տեղագրական տվյալներից ելնելով՝ ենթադրում ենք, որ «Մակացությունից» մեկ տարի անց «Քերականությունը» նույնպես գրվել է հաստոտում: Անդրադառնալով հեղինակի անձին՝ շեշտենք, որ նա իր մականունը հիշատակարաններից մեկում գրում է Քուրտքանցի «Ք»-ով, իսկ մյուսում՝ Քուրտկանցի «Կ»-ով: Տեղանունների բառարանից հայտնի է, որ Քուրդիկան ձմեռանոցը գտնվում է Արևմտյան Հայաստանի էրզրում նահանգի Բայազետի գավառում (նաև Քուրտիգան կամ Քուրդիկան գյուղ կա Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգում⁶): Քանի որ հաստոտը գյուղը և Ուլզլիսա վանքը գտնվում են միևնույն գավառում, հակված ենք մտածելու, որ մեր հեղինակի մականունը ծագել է ոչ թե Քուրդիկան գյուղից, այլ համանուն ձմեռանոցից, որն էլ հավանաբար նրա ծննդավայրն է: Այսպիսով՝ հեղինակի մասին մեր տեղեկությունները սուղ են. ընդամենը գիտենք, որ ապրել և գործել է ԺԸ. դարում Արևմտյան Հայաստանի էրզրում նահանգի Բայազետի գավառում: Հեղինակին և նրա գործերը, մասնավորապես «Քերականությունը», փնտրեցինք ոչ միայն Երևանի Մատենադարանի, այլև մյուս ձեռագրական հավաքածուներում, սակայն որևէ այլ տեղ չգտանք. փաստորեն հեղինակի կյանքի և գործունեության մասին տեղեկությունները մեզ են ավանդվել միայն ՄՄ 8706 ձեռագրով:

Ձեռագրի սկզբում հեղինակն ունի երեք քառատողից բաղկացած մի տաղ՝ «Ի տէր հաշատուրէ է սայ եւ ոգեալ» խորագրով, որը գովք է նվիրված խաչին, ենթադրում ենք, որ սա կապված է իր անվան հետ և տաղի յուրաքանչյուր տողը սկսվում և ավարտվում է «հ» տառով (-ախ հանգով)՝ «հաչին պատիւ տացուք յաճախ, / Խրախ եւ զւարճ սրտիւ ուրախ, / Խնդրեմք նստիլ յաջ ‘ւ ոչ ի ձախ, / Խմեմք զբաժակ յառաջ և նախ... Խրանս կարկատ հոգի անծախ, / Խաշատուրիս օրհն զկմախ» (Յա): Տաղի նախընթաց էջին պատկերված է հավասարաթև խաչ՝ եզրերը խարսխակերպ, իսկ կենտրոնում ոճավորված շրջանակի մեջ «հ» տառը, որը ևս, կարծում ենք, կապված է իր անվան հետ (Չբ):

Մինչ երկի քննությունն անցնելը փոքրիկ անդրադարձ կատարենք քերականության նախընթաց էջում պատկերված մանրանկարին (27բ): Մանրանկարում կա երկու անձ. սարկավագ՝ հավանաբար աշակերտի դերում, և տեր հաշատուրը՝ ուսուցչի: Տեր հաշատուրի ձեռքին դիմակ կա, որը ենթադրում ենք այլաբանական նշանակությամբ նրա գիտելիքների խորհրդանիշն է: Մենք մանրանկարն այսպես ենք մեկնաբանում՝ ըստ բնագրի համատեքստի:

Աշխատությունն ունի հետևյալ խորագիրը՝ «Գիրք քերակ[ան]ության վասն մանկանց եկեղեցոյ առ ի վարժումն նորակիրթ տղայոց ի ձեռն ուսումնասէր վարժապետաց» (27ա), այսինքն՝ վարժապետների օգտագործման քերականության ձեռնարկ աշակետներին դասավանդելու համար: Քերականությունը շա-

⁶ Նույն տեղում, էջ 451 և 454:

րադրված է կարճ հարց ու պատասխանի եղանակով, որը տարածված էր, նաև դասագրքերի դեպքում: Լեզուն բավական պարզ է ու մատչելի. հեղինակը հաճախ այն հասցրել է պարզունակության՝ հավանաբար կրկին հաշվի առնելով, որ ուսումնական ձեռնարկ է կազմում: Քուրտքանցու քերականությունը կառուցվածքով հիշեցնում է հունալատինատիպ քերականությունները. ավանդաբար բաղկացած է քերականության չորս «մասից» (բաժնից)՝ գիր, վանկ, բառ, բան և ութ խոսքի մասից, պարունակում է նաև հնչյունաբանական հարցեր, բառի ու բառախմբերի իմաստաբանական ու ձևաբանական քննություն, ուղղագրությանն ու կետագրությանը վերաբերող փոքրածավալ հատվածներ: Այս ամենը ներկայացված է քաղվածաբար, հաճախ սերտ առնչակցությամբ այս կամ այն, հիմնականում լատինատիպ քերականություններին:

Քուրտքանցին Բերականությունը սահմանելիս հետևել է լատինաբաններին, սակայն որոշ տարբերությամբ. եթե Ոսկանն այն համարում է «հմտութիւն գործիական»⁷, Սիմեոն Զուղայեցին ու Բաղդասար Դպիրը՝ «գիտութիւն տառից»⁸, իսկ Հովհաննես Հոլովը, Հովհաննես Մրքուզը, Կղեմես Գալանոսն ու Խաչատուր Կարնեցին՝ «արհեստ»⁹, ապա մեր հեղինակն այն կոչում է «ոճ բարուք խոսելոյ և բարուք գրելոյ» (28ա):

Քուրտքանցին առանձին գլուխներով քննում է «գրից» մինչև «բան» քերականական հասկացությունները: Սկսելով գրից՝ նա ևս լատինաբան քերականության ազդեցությամբ «գիր» բառն է որդեգրում «տառի» փոխարեն, սակայն սահմանում չի տալիս գրի համար: Գրի դասակարգման հարցում Ոսկան երևանցու¹⁰ հետևությամբ՝ բավարարվում է ձայնավորների ու բաղաձայնների ընդհանուր բաժանումով՝ զերծ մնալով հունաբան և լատինաբան քերականների մանրամասն դասակարգումներից: Քուրտքանցին, Հովհաննես Մրքուզի և Բաղդասար Դպիրի պես¹¹ խախտելով ավանդույթը, յոթ ձայնավոր է թվարկում՝ «ւ»-ը դասելով բաղաձայնների շարքում: Գրի վերջում թվարկում է «և, զ, Ֆէ» տառերը, նշում, որ դրանք «ոչ են ի կարգի» (28ա)՝ հավանաբար նկատի ունենալով, որ մաշտոցյան այբուբենում չեն եղել և միջին դարերում են գործածության մեջ մտել: Պահպանելով ձայնավորի ու բաղաձայնի ավանդական սահմանումը՝

⁷ Ոսկան Երևանցի, Քերականութեան գիրք համառոտիւք..., Ամստերդամ, 1666, էջ 3:

⁸ Սիմեոն Զուղայեցի, Գիրք որ կոչի քերականութիւն, Կ. Պոլիս, 1725, էջ 15, Պաղտասար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց, Կ. Պոլիս, 1736-1738, էջ 7:

⁹ Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հոռոմ, 1674, էջ 119, Յովհաննէս Մրքուզ, Համառօտ քերականութիւն և տրամաբանութիւն, Ամստերդամ, 1711, էջ 1, Կղեմէս Գալանոս, Քերական եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ, Հոռոմ, 1645, էջ ա, Խաչատուր Էրզրումեցի, Քերականութիւն, Լիվոռնո, 1696, էջ 23:

¹⁰ Ոսկան Երևանցի, էջ 3-4:

¹¹ Յովհաննէս Մրքուզ, էջ 2, Պաղտասար Դպիր, էջ 8:

Քուրտքանցին մինչ վանկին անցնելը խոսում է գրերի նշանակության մասին՝ տալով հետևյալ սահմանումը. «Զօրութիւն գրոցն այն է, զի կերպաւորէ զանուն, որպէս՝ հաց, ջուր, քար...» (28բ), այսինքն՝ գրերի նշանակությունը անուն կազմելն է: Քերականության մյուս բաժինները տրվում են պարզից բարդ՝ ավանդական աստիճանավորմամբ:

Հեղինակը վանկը սահմանում է որպես ձայնավորի և բաղաձայնի կապակցություն, և տարբերակում միավանկից մինչ քառավանկ՝ համապատասխան օրինակներով «միավանկ, այսինքն՝ հաց, լոյս..., երկվանկ, այսինքն՝ կրակ, գարի..., եռավանկ, այսինքն՝ մարդասէր, արարիչ..., քառավանկ, այսինքն՝ արարողին, մարդասիրին...»:

Բառը բավական պարզ է սահմանում՝ «բառն է զանազանութիւն բանին» (29ա), որը հիշեցնում է Թրակացու բառի սահմանումը՝ «Բառ է մասն դուզնաքեայ ըստ բաղդասութեան բանի»¹², որտեղ ևս բառի որևէ տարբերակիչ կողմ (հնչյունական, իմաստային) չի շեշտվում, և այն կարելի է համեմատել նաև վանկի կամ տառի հետ: Այնուհետև տարբերակում է իմաստ ունեցող և չունեցող բառեր՝ «նշանական, այսինքն՝ քար և փայտ, մարդ... և աննշան, այսինքն՝ քայ, փայ և այլ» (29աբ)¹³:

Քերականության այս հատվածն ավարտվում է «բան»-ի մասին խոսելով, որի համար հեղինակը սահմանում կամ որևէ բնորոշում չի տալիս՝ բավարարվում է միայն օրինակներով «երկինք պատմեն զփառս Աստուծոյ..., տո՛ւր զօրութիւն ծառա[յ]ի քոյ, կեցո՛յ զորդի աղախնոյ քոյ...», որոնցից էլ հասկանում ենք, որ բան ասելով նկատի ունի նախադասությունը:

Քուրտքանցին Թրակացու¹⁴ և նրա հայ մեկնիչների, լատինաբաններից Սիմեոն Զուղայեցու¹⁵ և Բաղդասար Դպիրի¹⁶ պես ընդունում է խոսքի ութ մաս՝ «անուն, բայ, ընդունելություն, դերանուն, յօդ, նախդիր, մակբայ, շաղկապ»:

Առանց որևէ սահմանման բերում է անուն խոսքի մասի օրինակներ՝ «քար, փայտ, մարդ, ձի, կրակ...»: Այնուհետև Կղեմես Գալանոսի¹⁷, Հովհաննես Հոլովի¹⁸ և Խաչատուր Կարնեցու¹⁹ հետևությունները որպես անվան տեսակներ առանձնացնում է գոյականը և ածականը: Ապա կրկին առանց սահմանումների նշում

¹² Ն. Աղոնց, էջ 12:

¹³ Դավիթ Անյաղթ, Վերլուծութիւն «ներածությունն» Պորփիրի, աշխ. Ս. Արևշատյանի, Երևան, 1976, էջ 8:

¹⁴ Ն. Աղոնց, էջ 12:

¹⁵ Սիմեոն Զուղայեցի, էջ 25:

¹⁶ Պաղդասար Դպիր, էջ 16:

¹⁷ Կղեմես Գալանոս, էջ 10:

¹⁸ Յովհաննես Կոստանդնուպոլսեցի, էջ 126:

¹⁹ Խաչատուր Երզնամեցի, էջ 41:

է, որ «ոմանք գոյականին ենթակայական ասեն և ածականին մակադրական ասեն» (30ա): Քուրտքանցին հավանաբար Զուղայեցուն²⁰ և Դպիրին²¹ նկատի ունի, քանի որ նրանք գոյականը կոչում են «ենթակայական», իսկ ածականը՝ «մակադրական» տերմիններով: Նշենք, որ մակադրականը որպես անուն խոսքի մասի տեսակ, դեռևս Թրակացին է առանձնացրել, որի տակ թվարկել է մի շարք ածականներ²²:

Մեր հեղինակն անվանը հատկացնում է միևնույն վեց քերականական կարգերը, ինչ Զուղայեցին²³ ու Դպիրը²⁴ «քանակ, թիւ, սեռ, ձև, տեսակ և հոլով»: Քանակ ասելով՝ նա լատինաբան մյուս քերականների պես²⁵ հասկանում է անունների բաժանումը հատուկների ու հասարակների: Թվի դեպքում կրկին ավանդական բաժանման է հետևում՝ զատելով «եզակի և օգնակի թիւ» (30ա): Հունաբան ու լատինաբան քերականների նման ձև և տեսակ կարգերի տակ քննում է անվան բառակազմությունը՝ ըստ ձևի տարբերելով պարզ, բարդ, հարաբարդ, իսկ ըստ տեսակի՝ նախատիպ (պարզ) և ածանցյալ անունները: Հեղինակն առանձնացնում է չորս սեռ, որոնք օրինակներով հանդերձ բառացիորեն կրկնօրինակված են Դպիրի քերականությունից²⁶ «Սեռն է չորս, այսինքն՝ արական (ա), իգական (բ), անորոշ (գ), չէզոք (դ): Արական՝ Ղազար, իգական՝ Մարիամ, անորոշ՝ գառ, զաւակ, չէզոք՝ քար, փայտ...» (30ա): Ինչպես Մրքուզի²⁷, Զուղայեցու²⁸, Դպիրի²⁹ քերականություններում, այստեղ ևս միևնույն տասը հոլովներն ենք տեսնում՝ ուղղական, սեռական, գործիական, հայցական, արտագոյական, պատմական, տրական, սկզբնական, ներգոյական, կոչական՝ յուրաքանչյուրը համապատասխան օրինակներով: Հոլովման հարացույցում ներգոյական հոլովը հավանաբար սխալմամբ մեկ անգամ կոչում է նաև ներգործական: Բաժնի վերջում հեղինակը ձևաբանական վերլուծության է ենթարկում «լոր» բառը՝ ամենայն հավանակությամբ սերտածը յուրացնելու, ամրապնդելու նպատակով:

Բայի համար բառացիորեն նույն բնորոշումն է տալիս, ինչ Դպիրը³⁰. «Բայն

²⁰ Սիմեոն Զուղայեցի, էջ 25-26:

²¹ Պաղտասար Դպիր, էջ 18:

²² Ն. Ադոնց, էջ 18:

²³ Սիմեոն Զուղայեցի, էջ 29:

²⁴ Պաղտասար Դպիր, էջ 20:

²⁵ Սիմեոն Զուղայեցի, էջ 29, Ոսկան Երևանցի, էջ 7, Պաղտասար Դպիր, էջ 20, Յովհաննէս Մրքուզ, էջ 6 և այլն:

²⁶ Պաղտասար Դպիր, էջ 20:

²⁷ Յովհաննէս Մրքուզ, էջ 9:

²⁸ Սիմեոն Զուղայեցի, էջ 31:

²⁹ Պաղտասար Դպիր, էջ 22:

³⁰ Նույն տեղում, էջ 48:

է երկրորդ մասն բանի, նշանակող իրակութեան, որպէս անուն է նշանակող իրի, այսպէս և բայն է նշանակող իրակութեան, որպէս՝ գնալ, գալ, նստիլ, կանգնիլ, սիրել, ատել և այլ» (31բ-32ա): Դպիրի հետևութեամբ³¹ Քուրտքանցին նշում է բայի քերականական վեց կարգ՝ սեռ, թիվ, դեմք, տեսակ, ամանակ և որակութիւն (որակութիւն ասելով՝ Քուրտքանցին Դպիրի պես հասկանում է բայի եղանակները): Բային հատկացվող քերականական կարգերի քանակն ու քննութիւնը, ընդհուպ օրինակները, նույնն են Բաղդասար Դպիրի քերականութեան հետ. Քուրտքանցին ծաղկաքաղ է արել Դպիրի քերականութեան համապատասխան բաժնից՝ զգալիորեն պարզեցված ձևով³²: Այսպէս՝ առանձնացնում է չորս սեռ՝ «ներգործական, կրաւորական, ընդմիջական, հասարակ», երկու թիւ՝ «եզակի և օգնակի», երեք դեմք՝ «առաջին՝ ես, երկրորդ՝ դու, երրորդ՝ նայ, ես սիրեմ, դու սիրես, նայ սիրէ», երկու տեսակ՝ «նախատիպ (պարզ) և ածանցեալ», երեք ժամանակ՝ «ներկայ, անցեալ, ապառնի, բայց անցեալն է Գ.՝ անցեալ անկատար, անցեալ կատարեալ, անցեալ յարակատար, անցեալ գերակատար» և հինգ եղանակ՝ «որակութիւնն բայիցն են Ե., այսինքն՝ սահմանական, հրամայական, ըղձական, ստորադասական, աներևոյթ»:

Ինչպես Դպիրը³³ նա ևս ընդունելությունը (դերբայ) դիտում է իբրև անվան և բայի հատկանիշները զուգորդող խոսքի մաս՝ «Ընդունելութիւն է երրորդ մասն բանին, որ անուն և բայն ի միասին լինի» (33բ): Նշում է հինգ ընդունելություն՝ -օղ, -իչ, -եալ, -լի, -լոց վերջավորություններով: Հաջորդում է ընդունելության քերականական կարգերից թվի, տեսակի և ժամանակի սեղմ ու հպանցիկ քննությունը: Ընդամենը թվարկվում են տեսակների անվանումներն ու բերվում են օրինակներ. «թիւ ընդունելութիւնն է երկու՝ եզակի՝ փրկեցի, օգնակի՝ փրկեցին..., ամանակը են Գ.՝ ներկայ՝ յիշօղ, անցեալն է այս՝ յիշեալն, ապառնին է այս՝ յիշելին...»: Ընդունելության համար տրվում են նույն տեսակներն (նախատիպ, ածանցյալ), ինչ բայերի համար. նշվում է միայն, որ ընդունելությունները ածանցվում են ոչ միայն բայերի (յիշօղ - յիշեցուցանօղ, յիշիչ - յիշեցուցիչ), այլև անունների նման (յիշօղ - յիշողութիւն կամ յիշողական):

Խոսելով դերանվան մասին՝ նա սահմանում չի տալիս, միայն նշում է, որ «դերանունն է Գ.՝ ես, դու, նայ, սա, դա, ինքն...» (34ա): Ապա առանձնացնում է ունական և շաղկապով դերանուններ («ես և դու»): Թվարկում է «իմ, քոյ, նորայ, մեր, ձեր, նոցայ, մեք, դուք, նոքայ» դերանունները, որոնք Բաղդասար Դպիրը³⁴ պես կոչում է «ունական»: Այս դասակարգման մեջ քերականը թույլ է

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում, էջ 48-54:

³³ Նույն տեղում, էջ 110:

³⁴ Նույն տեղում, էջ 119:

տվել անճշտություն՝ «ունական» համարելով «էական»՝ «մեք, դուք, նոքայ» դերանունները: Դերանվանը հատկացնում է թվի, դեմքի և հոլովի քերականական կարգերը, որտեղ ևս անճշտություն ենք տեսնում, քանի որ «հոլովք դերանուն»-ի համար նա ընդունելության (դերբայի) օրինակներ է բերում՝ «սիրել, սիրելոյ, սիրելեալ» (34բ):

Հոդի դեպքում նույն պատկերն է ուրվագծվում, ինչ Բաղդասար Դպիրի աշխատության մեջ, այն տարբերությամբ, որ Դպիրը առանձնացնում է «բազմատառ» հոդ³⁵, իսկ դրա դիմաց Քուրտքանցին առաջարկում է «եռատառք, քառատառք» հոդեր: Հեղինակը սահմանում չի տալիս, միայն թվարկում է միատառ բուն հոդերը՝ «ս, դ, ն», և ցուցական եռատառ կամ քառատառ հոդերը՝ «այս են, այդ են, այնք են...», սոյն, դոյն, նոյն... սըմայ, դմայ, նըմայ..., սորա, դորայ, նորայ...»:

Նախդիրը այսպես է սահմանում՝ «այն որ նախադասի անունանց» (35ա), ապա հաջորդում են օրինակները: Որքան էլ, որ Քուրտքանցին ըստ նշանակության և ըստ հոլովառության (բացի հոլովականից) նախդիրների բաժանում չի կատարում, այդուհանդերձ օրինակներում հանդիպում են այդպիսիք. այսպես՝ զատական. «ընդ մեզ Աստուած շրջեցար, ընդ մեղաւորացս», տեղական. «կամ ժամանակական. «մինչև ի գալուստն Տեառն», տեղական. «կամ դասական. «առաջի քոյ Տէր»: Նյութն ավարտում է՝ բավարարվելով միայն հոլովակերտ նախդիրների թվարկումով, որոնք անվանում է «հոլական նախդիր՝ գ, ի, յ, ն, ո, ց» (35ա): Կարծում ենք՝ «հոլական նախդիր» անվանումը սխալմունքի արդյունք է և ոչ թէ նորահայտ տերմին, և Քուրտքանցին նկատի է ունեցել հոլովական նախդիրները, իսկ դրանց շարքում թվարկած «ո» նախդիրը ևս սխալ է, պիտի լիներ «ով», ինչպես Դպիրի մոտ³⁶: Իսկ հետևյալ օրինակներում ընդհանրապես նախդիրներ չկան՝ «զի դու Տէր օգնեցեր ինձ, քանզի դու Աստուած»:

Շաղկապ է համարում այն «որ զանուն շարակցէ կամ կապէ ընդ միմեանս» (35բ): Տարբերակում է շաղկապի հետևյալ չորս տեսակները՝ բաղնյուսական (նաև կապակցական է կոչում)՝ «և իսկ, և այլև, նաև, որ և, իսկ և», տրոհական՝ «կամ, կամ թէ և կամ, կամ և», պատճառական՝ «զի, քանզի, որպէսզի, այնուզի», այլական՝ «այլ, բայց, սակայն, բայց սակայն», յուրաքանչյուրն իր օրինակներով բաց թողնելով լատինաբան քերականների առաջարկած մյուս շաղկապները:

Քուրտքանցին մակբայ խոսքի մասի համար հետևյալ սահմանումն է տալիս՝ «այն, որ յառաջ բային դնի» (36ա) ու առանձնացնում ժամանակական՝ «այսօր, զոր արար Տէր», ֆանական՝ «որքան աւուրբդ անցեալ են, այնքան

³⁵ Նույն տեղում, էջ 135:

³⁶ Նույն տեղում, էջ 145:

աուրքդ մեռեալ են», քվական՝ «մի անգամ եղև բանըն մարմին», արգելական՝ «մի՛ խօսի, մի՛ շնար, մի՛ սուտ վկա[յ]եր», հարցական՝ «է՞ր, վա՛սն էր, ընդէ՞ր, ո՞ր, աղաքա՛ւ», արագական՝ «վաղվաղակի, շուտ-շուտ, փոյթ առ փոյթ, շեշտիւ առ շեշտիւ», գորեղական՝ «յոյժ, կարի, խիստ, յոյժ կարի» տեսակները: Թվական մակբայը արհեստականորեն ֆանականանից առանձնացված տեսակ է, իսկ Դպիրի «սաստկական» մակբայների համար³⁷ նոր տերմին է առաջարկում՝ «զօրեղական»:

Ավարտելով ութ խոսքի մասերի քննությունը՝ հեղինակը սահուն անցում է կատարում միջարկությանը, թեև քերականության սկզբում այն չէր հիշատակել: Փաստորեն խոսքի մասերի թիվն ավելացնում է մեկով, ինչպես Կղեմես Գալանոսը³⁸ ու Բաղդասար Դպիրը³⁹, որոնք խոսքի մասերի շարքում չեն քննում, բայց աշխատության վերջում խոսում են միջարկության մասին: Քուրտքանցին միջարկություն է համարում «այն, որ ի մէջ տրտմութեան և ուրախութեան» (36բ): Թվարկում է հետևյալ տեսակները՝ տնագական՝ «հա՛յթ է եղև, հա՛յ», վայական՝ «ո՛հ, վա՛յ, վո՛ւ», զարմանական՝ «ո՛, ո՛ր», հաւանական՝ «եղիցի՛, եղիցի՛»: Մեր հեղինակը միջարկության տեսակների համար նորահայտ տերմիններ է առաջարկում. այսպես՝ Բաղդասար Դպիրի «վրիժական» կամ «հատուցական» միջարկության փոխարեն առաջարկում է «տնագական» տերմինը, «եղկական» ու «ափսոսական» միջարկությունները միավորում է՝ ստեղծելով «վայական» միջարկություն, իսկ «հիացական»-ի փոխարեն էլ «զարմանական»-ն է ստեղծել:

Քուրտքանցու քերականությունը շարահյուսության բաժին չունի, հնչունաբանության ու ձևաբանության բաժիններին հաջորդում են մի քանի հատվածական, հիմնականում անխորագիր նյութեր, որոնք անկանոն, անհետևողական և կամայական հաջորդականությամբ են շարադրված ու հաճախ ընդմիջարկված իմաստասիրական նյութերով, և մանր հավելագրությունների տպավորություն են թողնում: Փաստորեն կառուցվածքային տեսանկյունից ևս հեղինակը ընդօրինակել է Դպիրին, որն իր աշխատության երկրորդ հատորի վերջում ունի համառոտ քերականություն⁴⁰: Նախորդ բաժինների պես այստեղ պատկերը կրկին նույնն է՝ քաղվածաբար ընդօրինակված Բաղդասար Դպիրի քերականությունից:

Առանց որևէ խորագրային բաժանման միջարկությանը հաջորդում են խոսքի մասերի քննությունը (անուն, բայ): Հեղինակը, չտարբերակելով բուն խոսքի

³⁷ Նույն տեղում, էջ 156:

³⁸ Կղեմէս Գալանոս, էջ 66բ:

³⁹ Պաղտասար Դպիր, էջ 300-304:

⁴⁰ Նույն տեղում, էջ 466-593:

մասերն ու դրանց տեսակները, անմիջապես սկսում է անուն խոսքի մասից ու բաժանում է հետևյալ տեսակների՝ գոյականի՝ «վարդ», ածականի՝ «հոտով վարդ», դերանվան (օրինակ չի բերում, միայն բացատրում է՝ «գերանուն է, որ փոխանորդ կոչի»), հարանվան՝ «ակ, ջրի ակ, մատանի», թվականի՝ «Ա., Ժ., Ի., Լ., Զ., Թ.», հատուկի՝ «Պողոս», հասարակի՝ «մարդ», ընդհանրականի՝ «ամենայն, բովանդակ, համալին», հավաքականի՝ «քոմ, երամ, կուտոց», տարածականի՝ «հասարակ»⁴¹, վերացյալի՝ «քերականություն», թանձրացյալի՝ «քերական», սուրբ անվան՝ «քահանայ», կեղտանվան՝ «գող, շնացող, կեղծաւոր»։ Յուրաքանչյուր տեսակի համար բերում է մեկ-երկու օրինակ։

Ապա բայերի տեսակներն է թվարկում՝ ներգործական՝ «սիրեմ», կրավորական՝ «սիրիմ», ընդմիջական՝ «ես կերի, ես արբի», էական՝ «եմ, կամ, գոմ, եղէ», գոյնական՝ «այրեմ, այրեցի», կողմնական՝ «նստիմ, նստայ»։ Քուրտքանցին բայի յոթ տեսակ է տարբերակում, որոնց թվում նաև անդէմ բայը, սակայն արդեն օրինակներ բերելիս կարծես մոռանում է բայի այս տեսակը և դրա փոխարեն առանձնացնում հասարակ բայը հետևյալ օրինակով՝ «արեգակն լուսաւորէ զաշխարհիս»։

Ածանցական անունների այս տեսակներն է տարբերակում՝ գոյական (-ային), նյութական (-եղէն), տեղական (-ցի), նախնական (-եան), տնկական (-ենի), իգական (-ուհի), դասական (-որդ), ստացական-պարունական (-ստան, -արան, -ոց), շատական (-ուտ), ունական (-աւոր), պակասական (-ատ), բաղդատական (-գոյն), գերադրական (-եղ), նվազական (-եակ, ուկ), մակրդական (-ոտ), հարմարական (-ացու)։ Քուրտքանցի ոչ բոլոր ածանցական անուններն է թվարկել, ինչպես նաև ստացականն ու պարունականը միավորել է, կամ վրիպել է և ստացականի օրինակներ չի բերել։

Այնուհետև անցում է կատարվում ձայնավորին, և թեպետ հնչյունաբանություն բաժնում ձայնավորի տեսակներ չէին առանձնացվել, այստեղ հեղինակը լրացնում է բացը և Բաղդասար Դպիրի նման առանձնացնում երկար, միջակ և սուղ ձայնավորներ։ Հիշենք, որ երկար և սուղ (կարն) ձայնավորներ հայերենում առանձնացվել էին դեռևս Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեջ⁴², բնականաբար, հունարենի հետևողությունամբ, իսկ արդեն Մ. Սեբաստացու մոտ⁴³ երկար և կարն ձայնավորների կողքին տեսնում ենք նաև միջակ ձայնավորներ։

⁴¹ Կարծում եմ՝ սա շփոթ է կամ սխալմունք, քանի որ անուն խոսքի մասի նման տեսակ ու, հատկապես, հեղինակի բերած օրինակով չկա, Դպիրից հայտնի է տարածական հոլովում, որով նա կոչում է անուն խոսքի մասի կանոնավոր հոլովումները, հմմտ. Պաղտատար Դպիր, էջ 251։

⁴² Ն. Արմեն, էջ 5։

⁴³ Մխիթար Սեբաստացի, Քերականություն գրաբանի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 224։

Կետադրության հպանցիկ անդրադարձում երեք կետադրական նշան է առանձնացնում՝ «վերջակետ, ստորակետ, միջակետ», ապա հավելում, որ կա ևս մի կետ «մականետ» անունով, որը դրվում է «ի գլուխս գրոց զնի...» (37բ) նկատի ունենալով ապաքարցը:

Ուղղագրությանը վերաբերող հարցերը Քուրտքանցին քննում է «Յաղագս գրոց» խորագրով բաժնում: Գրի համար տալիս է այլաբանական սահմանում՝ «Գիրն է մարմին բանի, որ զծածուկ խորհուրդս մեր մարմին զգեցուցանէ» (37բ): Հավելագրության այս հատվածում քննում է հետևյալ գրերը՝ «Հին» («Իին»-ը նկատի ունի), «Յի» և ներհակ գրեր, նաև խոսում է պատվագրության մասին:

«Հին»-ի համար առանձնացնում է և՛ ձայնավոր, և՛ բաղաձայն գործածության օրինակներ՝ «Տին» (Տ տառի անվանումը) և «Թին»: «Տին»-ի օրինակում «Ի» տառը հեղինակը ձայնավոր է ընկալում, իսկ «Թին»-ի դեպքում՝ բաղաձայն, այսինքն՝ Դպիրի նման «Ի»-ը դիտում է մերթ իբրև ձայնավոր, մերթ իբրև բաղաձայն «տառ»: «Յի»-ի գրության երեք դիրք է տարբերակում՝ առաջագիր, որը կոչում է «ձգտեալ», վերջագույն՝ «քարշեալ» և միջագույն՝ «նստեալ»: «Ներհակք գրոց» անվան տակ առանձնացնում է գրության նման և ոչ նման տառեր ու թվարկում գրությամբ նմաները՝ «ա-տ, բ-ե, գ-դ, զ-ղ, ս-ռ, ք-ֆ»: Պատվի նշան է անվանում այն, «որ նըստի ի վերայ գլխոյն գրոց» և բերում պատվագրով հապաված մի քանի օրինակ՝ « Դր [որպէս], Տր [Տէր], Ած[Աստուած] »:

Գրերից հետո կարճ խոսում է նաև նախադրության մասին և, ի տարբերություն հիմնական Քերականության համապատասխան բաժնի, որտեղ ըստ հոլովառության տարբերակման, միայն հոլովակերտ նախդիրներ էր առանձնացնում, այստեղ հեղինակը մյուս երկուսի մասին ևս խոսում է՝ ա) «զատական» (ընդ, վասն, ըստ, սակս), բ) «բաղադրական» (ան, տը, ապա, բէ), գ) «հոլովական» (զ, ըն, ցը, ց, ի, ու): Բաղադրական նախադրության դեպքում սխալմունք կա, քանի որ «ապա» և «բէ» նախդիրներ հայերենում չկան, հավանաբար «ապա»-ի փոխարեն «ապ» պիտի լիներ, իսկ «բէ» նախդիրը գուցե բարբառային է և ծագում է պարսկերենից, ինչպես՝ բէխապար (*bi-xābār*) - անտեղյակ, անիրազեկ, բէշմար (*bi-šomar*) - անթիվ, անհաշիվ, բէշարայ (նաև թուրքերեն՝ *bi-çare*) - անճարակ, բէսիֆաթ (նաև արաբերեն՝ *bī-sifat*) - տգեղ, տձև, անկերպարան, բէվայֆայ (նաև արաբերեն՝ *bī-vāfa*) - անհավատարիմ, անվստահելի⁴⁴:

«Յաղագս պարագայք գրոց» խորագրով նյութի մեջ հեղինակը քերականության հետևյալ բաժիններն է առանձնացնում՝ ա. տողագարծի կիրառությունը ընդգրկում է «գրագարծութիւն»-ը, բ. գրի ճիշտ ընթերցումը՝ «վերծանութիւն»-ը, գ. գրատեսակների կիրառությունը՝ «գրակազմութիւն»-ը, դ. ուղղագրու-

⁴⁴ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 218-219:

թյունը, լծորդ բաղաձայնների առանց շփոթելու գրելը՝ «յարմարութիւն»-ը (հավանաբար նկատի ունի «յարմարագրութիւն»-ը), ե. տրոհության նշանների կիրառությունը՝ «կետագրութիւն»-ը:

Տողադարձի հետևյալ կանոնն է տալիս. եթե տողավերջում բառը ձայնավորով է ավարտվում, միայն ստորակետ է գրվում, եթե բաղաձայնով, ապա զույգով է գրվում ձայնավորի հետ և առանց ստորակետի: Ստորակետը քերականներից ոմանք «ստորոտ ենթամնա» են անվանում, ոմանք՝ «ստորոտ» (հավանաբար ստորատ նկատի ունի): Այստեղ տեսնում ենք, որ ստորակետը, ենթամնան և ստորատը նույնացվել են և կիրառվել որպես բառի բաղադրիչները միացնող՝ տողադարձի նշան:

Տողադարձի կիրառությունը հայտնի է դեռևս Ե. դարի աղբյուրներից, սակայն առանց որևէ հատուկ կանոնի: Գործել է մեխանիկական տողադարձման սկզբունքը. մինչ տողավերջ բառից գրել են այնքան տառ, որքան տեղավորվել է, իսկ մնացածը տեղափոխել են հաջորդ տող (անգամ մեկ տառը): Ա. Աբրահամյանի վկայմամբ, մինչ ԺԳ. դարը գրված ձեռագրերում չի հանդիպել տողադարձման նշանը (ենթամնա) և առաջին հնագույն աղբյուրը Մովսես Կաղանկատվացու 1289 թ. ընդօրինակությունն է⁴⁵, իսկ Հ. Տաշյանը ԺԵ. դարի սկիզբն է համարում տողադարձի նշանի գործածության սկիզբ⁴⁶: Ենթամնայի գործածությունը կանոնավոր բնույթ չի կրել. մերթ գրել են այս նշանը, մերթ ոչ: Ձեռագրերում այն տարբեր ձևով է հանդիպում՝ կիսաղեղից, կիսալիքաձև գծիկից մինչև ուղիղ գիծ⁴⁷:

Առողանությունն նշաններից ստորատը առաջինը հիշատակում են քերական մեկնիչները՝ յուրաքանչյուրը տալով իր բնորոշումը. ըստ Մովսես Քերթովի՝ «ստորատ ի խոնարհ կայ, որ է յետին...»⁴⁸, Գևորգ Սկևռացին, Եսայի Նչեցին նույնացնում էին ստորակետն ու ստորատը, ինչին անդրադառնալով Զահուկյանը նկատում է, որ Գևորգ Սկևռացին շփոթել է, դասելով ստորատը տրոհության նշանների կարգին⁴⁹, իսկ Լ. Խաչերյանը գտնում է, որ պարզապես Սկևռացու ժամանակ ստորատը կորցրել էր իր բուն իմաստը, ձուլվել ստորակետին⁵⁰: Առողանության նշաններից ամենաքիչը խոսվել է ստորատի մասին: Բացի այդ այն շատ քիչ է գործածվել և որոշ ժամանակ հետո էլ ընդհանրապես դուրս է

⁴⁵ Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի, Երևան, 1940, էջ 53:

⁴⁶ Զ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա, Վիեննա, 1898, էջ 162-163:

⁴⁷ Հ. Մխիթարյան, «Առողանություն», էջմիածին, ԺԷ տարի, 1960, Բ, էջ 55:

⁴⁸ Նույն տեղում, էջ 57:

⁴⁹ Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), էջ 96:

⁵⁰ Լ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 154-155:

մնացել գործածությունից: Դավիթ քերականը հակադրում է ենթամնա և ստորառ նշանները. «Եւ ենթամայն և ստորատդ հակառակին միմեանց. ենթամայնդ ի խառնել զբանդ իբր թէ արէնստուոյց, իսկ ստորատդ՝ ի բաժանել զսոյն...»⁵¹: Ստորատը գործածել են բառերի սահմանները ճիշտ որոշելու համար, սակայն հին շրջանի ձեռագրերում չկային բառանջատումներ, և այս նշանի կիրառությունը ևս չկար, հակառակ դեպքում բոլոր բառերի վերջին տառերի վրա այն պիտի դրվեր: Եվ զարմանալի չէ, որ քերականները դժվարանում են ասել, թե երբվանից է սկսել գործածվել այս նշանը, քանի որ հին ձեռագրերում այն այնքան քիչ է հանդիպում, որ կարելի է ասել՝ չի եղել: Հ. Մխիթարյանը կարծում է, որ այս նշանը բնավ չի համապատասխանում հայերենի պահանջներին, որևէ գործնական նշանակություն չունի⁵²: Ձևի տեսակետից ստորառը նման է ստորակետին, սակայն բարձր դիրք ունի:

Քերականները ստորակետը համարել են բարդ նախադասությունները և նախադասության առանձին անդամները տրոհող կետ: Հազարյան և էջմիածնի Ավետարաններում հանդիպում են ստորակետի կիրառության բազմաթիվ օրինակներ՝ այժմյան ձևով և դիրքով: Ստորակետի գործածության սկիզբը համարվում է Թ-Ժ. դարերը⁵³:

Քանի որ Քուրաքանցին որևէ տերմինի ձևային նկարագրություն չի տալիս, հետևաբար մենք դրանք հասկանում ենք ըստ հին և միջնադարյան աղբյուրների ձևային նկարագրության ու կիրառման (ստորառ-ստորակետ՝ «», ենթամնա՝ «-»), և դժվարանում ենք ասել, թե նա ինչու է ստորակետը և ստորատը համարել տողադարձի նշան, քանի որ այդօրինակ կիրառություն որևէ քերական չի հիշատակում: Ուստի կարծում ենք, որ հավանաբար սա շփոթի արդյունք է, հատկապես որ նրա Քերականության մեջ հաճախ են հանդիպում զանազան շփոթներ ու սխալներ:

«Վերծանություն»-ը սահմանում է՝ «պարզ և բնական գրով ընթեռնուլ» և բերում օրինակներ, երբ որոշակի բառեր պետք է արտասանել որոշակի հնչյուններով, ասենք՝ «զջուրն ասել ջուր և ոչ ճուր...» (38բ):

Հաջորդ՝ «գրակազմություն» բաժնում թվարկվում են գրերի տեսակները՝ բոլոր (բոլորգիրը նկատի ունի), գլխագիր, նոտր (նոտրգիրը նկատի ունի): Նույն գրատեսակները տեսնում ենք Գալանոսի գրակազմության բաժնում, սակայն առավել մանրամասն քննությանմբ⁵⁴:

Հարմարագրությունը իբրև բաժին դեռևս Գալանոսն է առանձնացրել, որ-

⁵¹ Ն. Ադոնց, էջ 124:

⁵² Հ. Մխիթարյան, «Առողանություն», էջ 56:

⁵³ Հ. Մխիթարյան, «Հայերենի կետադրությունը», էջմիածին, ԺԴ տարի, 1957, Զ, էջ 61:

⁵⁴ Կղեմէս Գալանոս, էջ Բ-Գ:

տեղ քննում է ուղղագրության հիմնական կանոնները⁵⁵: Քուրտքանցին «յարմարագրութեան» համար տալիս է հետևյալ սահմանումը՝ «զանունն յարմար գրով գրել, այսինքն՝ սեփական գրով» (39ա), և բերում է վերծանության բաժնի ուղղագրական օրինակներից. «այսպէս՝ ջուր և ոչ ճուր... ճուրն է խորթ և ջուրն է սեփական»:

Վերջին բաժնում թվարկում է հինգ կետագրական նշան՝ միջակետ, ստորակետ, վերջակետ, մակակետ և բութ: Մակակետը՝ նույն ինքը ապաթարցը, ձեռագրերում գործածել են բառանշատման նպատակով, այսպես՝ «ի» նախդիրը կամ «է» օժանդակ բայը նախորդ կամ հաջորդ բառից գրությամբ բաժանելու համար: Նախդրի կամ օժանդակ բայի գլխին կամ աջ ու ձախ կողմերում դրվում է փոքրիկ ստորակետ: Քերականները մակակետը անվանել են ի նախդրի սեփական նշան⁵⁶:

Քերականության բաժիններին հաջորդում են կողմնական (անկանոն բայեր) և ընդմիջական (չեզոք սեռ) բայերի խոնարհման հարացույցերը: Կողմնական և ընդմիջական բայերի առանձնացումը քերականագիտության մեջ հայտնի է Ս. Զուղայեցուց⁵⁷: Հաջորդիվ աներևույթ (անոռոշ դերբայ) բայերն է թվարկում և բացատրում, որ սրանք դեմք, թիվ և ժամանակ չունեն, մինչդեռ սահմանականը, հրամայականը, ըղձականը և ստորագասականը ունեն: Բայի այս եղանակները հայտնի են Թրակացու քերականության հայերեն թարգմանությունից⁵⁸: Այս տրվում են բայի վերլուծության օրինակներ: Բային վերաբերող հատվածական նյութը ավարտվում է հասարակ բայերի քննությամբ: Եվ Քուրտքանցին, լատինաբանների պես հասարակ բայ ասելով, հասկանում է բայի այն տեսակները, որոնք միևնույն ձևով և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստ են արտահայտում, այսպես՝ «ներգործական, այսինքն՝ Մարիամ ծնաւ զՔրիստոս, կրաւորական՝ Քրիստոս ծընաւ ի Մարիամայ»:

Հաջորդիվ Քուրտքանցին քննում է հոմանունությունը՝ «որ անունն մի է և իրն բազում, որպէս՝ ակն... ջրի ակ, մատանոյ ակ, սայլի ակ, մարդոյ ակ..., այրի, ահա այրի մարդ կամ կին, այս անուն և բայ այրի, այսինքն՝ վառի...» (41ա), փաղանունությունը՝ «որ անուն և իրն ի միասին լինի... որպէս՝ սեռն և տեսակ լինի մի անհատ, և անհատն լինի սեռ և տեսակ» (41բ), հաւանունությունը՝ «որ թանձրացեալ և վերացեալ անւանց ծնանին, որպէս՝ քերականն է թանձրացեալ և քերականութիւն է վերացեալ» (անդ):

Հատվածական քերականություններից վերջինը «Յաղագս քակելոյ զբանս»

⁵⁵ Նույն տեղում, էջ գ-թ:

⁵⁶ Հ. Մխիթարյան, «Առողանություն», էջ 57:

⁵⁷ Սիմեոն Զուղայեցի, էջ 66, 68:

⁵⁸ Ն. Աղոնց, էջ 22:

խորագրով բաժինն է, ուր բերված են նույն բառերի տարբեր շարադասությունների՝ «Շարագրեալս այսպէս՝ տո՛ւր զօրութիւն ծառայի քոյ, քակելն է այսպէս՝ քոյ ծառային զօրութիւն տուր...» (42բ):

Այսպիսով, հաշատուր Քուրտքանցին կարճ ամփոփել է նախորդ քերականների, հատկապես Բաղդասար Դպիրի աշխատանքը: Որքան էլ այս աշխատությունն ինքնուրույնությունը քիչ է, և անգամ օրինակներն են բերված այս կամ այն քերականից, այդուհանդերձ հեղինակը սոսկ տեխնիկական աշխատանք չի կատարել, այլ նախորդների փորձի հիման վրա ստեղծել է ուսումնական ձեռնարկ, ինչպես ինքն է նշում՝ «վասն մանկանց եկեղեցոյ առ ի վարժումն նորակիրթ տղայոց ի ձեռն ուսումնասէր վարժապետաց»:

Ներկայացնում ենք ԺԸ. դարում Արևմտյան Հայաստանի էրզրում նահանգի Բայազետի գավառում ապրած և գործունեություն ծավալած այս նորահայտ հեղինակի՝ հաշատուր Քուրտքանցու քերականությունը: Իհարկե, դժվար է ասել՝ նա ժամանակի քերականներից է եղել, թե՞ պարզապես գրիչ, այնուամենայնիվ կարծում ենք, որ այս քերականությունը ևս իր նպաստն է բերելու հայ քերականագիտական մտքի պատմության հարստացմանը՝ դառնալով այդ շղթայի օղակներից մեկը:

ԲՆԱԳԻՐ⁵⁹

Գիրք Բերականութեան վասն մանկանց եկեղեցոյ առ ի վարժումն նորակիրթ տղայոց, ի ձեռն ուսումնասէր վարժապետաց: Գրեցաւ ձեռամբ⁶⁰ տէր Խաչատուրի ումէմն Քուրտքանցի⁶¹ մականամբ⁶² կոչեցեալ ի հայրապետութեան սրբոյ էջմիած[նա] խորհրդական մօրս մերոյ և ի յառաջնորդութեան սրբոյ տանս մերոյ Ուշգլիսա սուրբ վանից տեառն Զաֆարիա արի և փաջ⁶³,

⁵⁹ Բնագիրը ներկայացնելիս բացել են բոլոր պատվագրով գրած կամ հապավված բառերը, իսկ բացթողումները վերականգնել ուղանկյուն փակագծերով: Հաշվի առնելով ձեռագրում կետադրության անկանոնությունը, այն շտկել ենք ըստ մեծօրյա կանոնների: Ուղղագրական սխալները բնագրում ուղղել ենք, սակայն տողատակում տվել ենք ձեռագրում եղած տարբերակը (միննույն սխալը մեկից ավելի անգամ հանդիպելիս տողատակում այլևս չենք նշել): Զուգաձև գրությունները թողնված են նույնությամբ՝ հաշվի առնելով դրանց հաճախակի կիրառությունը՝ այլ/այլն, կրառուրական/կրառական: Քերականական տերմինների սխալ անվանումները կամ կամայական կրճատումները որպես ուղղագրական սխալ չենք դիտարկել և չենք նշել տողատակում, թողել ենք նույնությամբ՝ պայմանավորված Քուրտքանցու լեզվի առանձնահատկությամբ՝ յարմարագրութիւն/յարմարութիւն, հոլովական/հոլական և այլն:

⁶⁰ Ձեռագրում՝ «ձեռամբ»:

⁶¹ Ձեռագրում՝ «Քուրտքանցի»:

⁶² Ձեռագրում՝ «մականամբ»:

⁶³ Ձեռագրում՝ «փաջ»:

բանիբուն և խոհեմ րաբուապետին և աստուածութեան վարդապետին, ի թուականի⁶⁴ հայոց ՌՄԻ.ին (1771)

Յաղագս ֆերականութեան

Զի՞նչ է քերականութիւն, ասա՛ ինձ: Քերականութիւն է ոճ բարուք խոսելոյ և բարուք գրելոյ:

Քանի՞ք են մասունք քերականութեան: Զորս են, այսինքն՝ գիր, վանկ, բառ և բան:

Ի քանի՞ս բաժանի գիրն, ասա՛ ինձ: Զերկուս բաժանի, այսինքն՝ ի ձայնաւորն և ի բաղաձայն:

Քանի՞ք են ձայնաւորքն, ասա՛ ինձ: Եօթն են, այսինքն՝ ա, ե, է, ը, ի, ո, օ: Որքա՞նք⁶⁵ են բաղաձայնքն, ասա՛ ինձ: Բաղաձայնքն են ի. և թ. (29), այսինքն՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ը, ց, լ, փ, ք, բայց և-ն, ժ-ն, ջէ-ն ոչ են ի կարգի:

Վասն էր ասի ձայնաւոր: Վասն զի թարց բաղաձայն գրոցն կարեն ձայնս հանել. այսպէս՝ ա՛, ե՛, է՛, ի՛, ը՛, ո՛, օ՛, իսկ բաղաձայնքն ոչ կարեն ձայնս հանել առանց ձայնաւորի գրոցն, եթէ ոչ շարակցին ընդ ձայնաւորի: Այսպէս՝ բա՛, բե՛, բէ՛, բը՛, բի՛, բո՛, բօ՛, կամ այսպէս՝ ա՛բ, ե՛բ, է՛բ, ի՛բ, ո՛բ, օ՛բ:

Զի՞նչ է զօրութիւն գրոց: Զօրութիւն գրոցն այն է, զի կերպաւորէ զանուն: Այսպէս՝ հաց, ջուր, քար և այլ:

Յաղագս վանկի, թէ զի՞նչ [է] վանկն

Վանկ է շարամանութիւն ձայնաւոր գրոցն ընդ բաղաձայնին: Այսպէս՝ քար, փայտ, մարդ, ջուր, տուն: Բայց գիտելի է, զի ոմանք միավանկ են, և ոմանք՝ երկվանկ, ոմանք՝ եռավանկ⁶⁶, ոմանք՝ քառավանկ⁶⁷ և այլ: Այսպէս՝ միավանկ, այսինքն՝ հաց, լոյս և այլ, ոմանք՝ երկվանկ, այսինքն՝ կըրակ, գարի, մանուկ և այլ, ոմանք՝ եռավանկ, այսինքն՝ մարդասէր, արարիչ, կենդանի, ոմանք՝ քառավանկ, այսինքն՝ արարօղին, մարդասիրին, Քըրիստոսին փառք յաւիտեան:

Յաղագս բառի, թէ զի՞նչ է բառն

Բառն է զանազանութիւն բանին: Վասն այն ասի զանազանութիւն, զի ի եօ-

⁶⁴ Զեռագրում՝ «թվականի»:

⁶⁵ Զեռագրում՝ «որքայնք»:

⁶⁶ Զեռագրում՝ «եռավանկ»:

⁶⁷ Զեռագրում՝ «քառավանկ»:

Թանասան և Բ. լեզուդ⁶⁸ բաժանի⁶⁹, քանզի հայքն ասեն հաց, քուրդն⁷⁰ ասէ նան, թուրքն ասէ աքմակ, արաբն⁷¹ ասէ խպէզ: Եւ բաժանի ի յերկուսն, այսինքն՝ նըշանական և յաննշան: Նըշանական, այսինքն՝ քար և փայտ, մարդ և այլ, և աննշան, այսինքն՝ քայ, փայ և այլ:

Յաղագս բանի

Բանն է այս՝ երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն, կամ այսպէս՝ տո՛ւր զօրութիւն ծառա[յ]ի քոյ, կեցո՛յ զորդի աղախնոյ⁷² քոյ և այլ:

Յաղագս մասանց բանին

Մասունք բանին են Ը., այսինքն՝ անուն, բայ, ընդունելութիւն, դերանուն, յօդ, նախդիր, մակբայ, շաղկապ:

Անունն է այսինքն՝ քար, փայտ, մարդ, ձի, կրակ և այլ: Անուն յերկուս բաժանի, այսինքն՝ գոյական և ածական: Գոյական⁷³՝ մարդ, կրակ, ածական՝ մեծ մարդ, գոյական՝ կրակ, ածական՝ տաք կրակ, գոյական՝ քար, ածական՝ մեծ քար, գոյական՝ փայտ, ածական՝ թաց փայտ, գոյական՝ ջուր, ածական՝ պաղ ջուր և այլ: Գիտելի է, զի ոմանք գոյականին ենթակայական ասեն և ածականին մակադրական ասեն:

Յաղագս հետևմանց անուանց

Հետևմունք անուանցն են վեց՝ քանակ, թիւ, սեռ, ձև, տեսակ և հոլով:

Քանակն է երկու՝ յատուկ և հասարակ: Յատուկ՝ Մասիս, Սիսական, հասարակ՝ սար:

Թիւն է երկու՝ եզակի և օգնակի: Եզակի՝ մարդ, օգնակի՝ մարդիկ⁷⁴, եզակի՝ քար, օգնակի՝ քարինք:

Սեռն է շորս, այսինքն՝ արական (ա), իգական (բ), անորոշ (գ), չեզոք (դ): Արական՝ Ղազար, իգական՝ Մարիամ, անորոշ՝ գառ, զաւակ, չեզոք՝ քար, փայտ և այլ:

Ձևն է Գ.՝ պարզ (ա), բարդ (բ), յարաբարդ (գ): Պարզ՝ գարի, բարդ՝ գարէհաց, յարաբարդ՝ գարեհացակեր և այլ:

⁶⁸ Ձեռագրում՝ «լեզուս»:

⁶⁹ ՀԲ. լեզուների բաժանման մասին տե՛ս Փիլոն Տիրակացի, [Ժամանակագրութիւն]. Խաւար փիլոսոփ, (ՄՀ, Ե. Հ., Է. դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 906:

⁷⁰ Ձեռագրում՝ «քուրքն»:

⁷¹ Ձեռագրում՝ «արապն»:

⁷² Ձեռագրում՝ «աղաղնոյ»:

⁷³ Ձեռագրում՝ «գոյեական»:

⁷⁴ Ձեռագրում՝ «մարդիկ»:

Տեսական է երկու՝ նախատիպ և ածանցեալ: Նախատիպն է քար, ածանցեալն է քարեղէն, նախատիպ՝ ջուր, ածանցեալ՝ ջրային և այլ:

Յաղագս հոլովմանց

Հոլովն է տասն ուղղական, սեռական, գործիական, հայցական, արտագոյական, պատմական, տրական, սկզբնական⁷⁵, ներգոյական, կոչական և այլ:

Աստ հոլով սահմանեալ սակաւ ինչ վասն անուանց:

Ուղղական	խնձոր ⁷⁶	քար	փայտ	լուս	ջուր
Սեռական	խնձորի	քարի	փայտի	լուսոյ	ջրոյ
Գործիական	խնձորիւ	քարիւ	փայ[տ]իւ	լուսով	ջրով
Հայցական	զխնձոր	զքար	զփայտ	զլոյս ⁷⁷	զջուր
Արտագոյական ⁷⁸	զխնձորիւ	զքարիւ	զփայտիւ	[զլուսով]	զջրով
Պատմական ⁷⁹	զխնձորէ	զքարէ	զփայտէ	զլոյսոյ	զջրէ
Սկզբնական	ի խնձորէ	ի քարէ	ի փայտէ	ի լուսոյ	ի ջրէ
Տրական	ի խնձոր	ի քար	ի փայտ	ի լոյս	ի ջուր
Ներգոյական	ի խնձորի	ի քա[ր-]	ի փայտի	ի լուսոյ	ի ջրոյ
(նաև ներգործական)		]իւ			
Կոչական	ո՛վ խնձոր	ո՛վ քար	ո՛վ փայտ	ո՛վ լոյս	ո՛վ ջուր

Ըստ մասանց բանին զի՞նչ է լորն, անուն, զի՞նչ անուն է, գոյական, զի՞նչ է ըստ քանակին՝ հասարակ, ըստ թւոյն՝ եզակի, ըստ սեռին՝ անորոշ, ըստ ձևոյն՝ պարզ, ըստ տեսակին՝ նախատիպ, ըստ հոլովման՝ ուղղական:

Յաղագս, թէ զի՞նչ է բայն

Բայն է երկրորդ մասն բանի՝ նշանակող իրակութեան: Որպէս անուն է նշանակող իրի, այսպէս և բայն է նշանակող իրակութեան. որպէս՝ գնալ, գալ, նստիլ, կանգնիլ, սիրել, ատել և այլ:

Քանի՞ք են հետևմունք անուանց [= բայի]: Հետևմունք բայիցն են Զ., այսինքն՝ սեռ, թիւ, դէմ, տեսակ, ամանակ, որակութիւն:

Քանի՞ք են սեռք: Չորք, այսինքն՝ ներգործական, կրաւորական, ընդմիջական, հասարակ: Զի՞նչ է ներգործական, որպէս՝ ճրագ լուսաւորէ գտուն, կրաւոր-

⁷⁵ Ձեռագրում՝ «զկզբնական»:

⁷⁶ Ձեռագրում՝ «խնձոր»:

⁷⁷ Ձեռագրում՝ «զլոյս»:

⁷⁸ Ձեռագրում՝ «արտայգոյական»:

⁷⁹ Ձեռագրում՝ «պատմայկան»:

րական, որպէս՝ տուն լուսաւորի ի ճրագէն, ընդմիջական, որպէս՝ ես նընջեցի և ի քուն եղէ: Հասարակ, կոչի այն, որ ձայն մի է և տեսութիւն երկու, որպէս՝ կոյսն ծնաւ զՔրիստոս, այս ներգործական և Քրիստոս ծնաւ ի կուսէն, և այս է կրաւորական, քանզի ներգործական և կրաւորական ի միասին լինի:

Քանի՞ է թիւ: Երկու, այսինքն՝ եզակի և օգնակի, եզակի, այսինքն՝ սիրեցի, օգնակի, այսինքն՝ սիրեցին:

Քանի՞ է դէմն: Երեք⁸⁰ առաջին՝ ես, երկրորդ՝ դու, երրորդ՝ նայ, ես սիրեմ, դու սիրես, նայ սիրէ:

Քանի՞ է տեսակ: Երկու, այսինքն՝ նախատիպ և ածանցեալ, նախատիպ՝ գրեցի, գրեցեր, գրեաց, ածանցեալ, այսինքն՝ գրեցուցի, գրեցուցեր, գրեցոյց և այլ:

Քանի՞ ք են ամանակք: Երեք՝ ներկայ, անցեալ, ապառ[ն]ի, բայց անցեալն է Դ՝ անցեալ անկատար, անցեալ կատարեալ, անցեալ յարակատար, անցեալ գերակատար և ապառնի: Ներկա կոչի այն, որ լինի, անցեալ կոչի այն, որ անցեալ է, ապառնի կոչի այն, որ յետոյ լինի: Այսպէս՝ ներկա, այսինքն՝ գրեմ, գրես, գրէ, անցեալ անկատար, այսինքն՝ գրէի, գրէիր, գրէր, անցեալ կատարեալ, այսինքն՝ գրեցեր, գրեցի, գրեաց, անցեալ յարակատար, այսինքն՝ գրեալ եմ, գրեալ ես, գրեալ է, անցեալ գերակատար, այսինքն՝ գրեալ էի, գրեալ էիր, գրեալ էր և այլ:

Զի՞նչ է որակութիւն բայից: Որակութիւնն բայիցն են Ե., այսինքն՝ սահմանական, հրամայական⁸¹, ըղձական⁸², ստորադասական, աներևոյթ, ածեմ զսայ արհեստն: Այսպէս՝ սահմանական, այսինքն՝ գրեմ, գրես, գրէ, հրամայական, այսինքն՝ գրեա՛յ, լուա՛յ, ըղձական այսպէս՝ երանի եթէ գրեր, երանի եթէ գրէիր, երանի եթէ գրէր, ստորադասական է այսպէս՝ եթէ գրեմ, եթէ գրես, եթէ գրէ, աներևոյթն է այսպէս՝ գրել, լանալ, հեղուլ և այլ, ներգործական այսպէս՝ գրեմ, լանամ⁸³, հեղում, կրաւորական՝ գրիմ, լանիմ, հեղանիմ և այլ:

Յաղագս ընդունելութեան

Զի՞նչ է ընդունելութիւն: Ընդունելութիւն է երրորդ մասն բանին, որ անուն և բայն ի միասին լինի, զմիմեանս ընդունելով, կոչին ընդունելութիւն: Այսպէս՝ փրկօղ, փրկիչ, փրկեալ, այսպէս և ի ներգործական, կրաւորական, այսպէս՝ փրկեալ, փրկելի, փրկելոց:

Թիւ ընդունելութեանն⁸⁴ է երկու՝ եզակի և օգնակի, փրկեցի, օգնակի՝ փրկեցին:

⁸⁰ Ձեռագրում՝ «երեք»:

⁸¹ Ձեռագրում՝ «հրամաեական»:

⁸² Ձեռագրում՝ «ըղձական»:

⁸³ Ձեռագրում՝ «լանիամ»:

⁸⁴ Ձեռագրում՝ «ընդունելութիւնն»:

Տեսական է երկու՝ նախատիպ և ածանցեալ: Այսպէս՝ նախատիպ ըստ անւան. այսպէս՝ յիշող, ածանցեալ. այսպէս՝ յիշողութիւն կամ յիշողական և ըստ բային այսպէս՝ յիշող, ածանցեալ՝ յիշեցուցանող, նախատիպ՝ յիշիչ, ածանցեալ՝ յիշեցուցիչ:

Ամանակք են Գ.՝ ներկայ՝ յիշող, անցեալն է այս՝ յիշեալն, ապառնին է այս՝ յիշելին և այլ ըստ կարգին]:

Յաղագս դերանուանց

Զի՞նչ է դերանուն: Դերանունն է Գ.՝ ես, դու, նայ, սա, դա, ինքն: Ունական դերանուն է այս՝ իմ, քոյ, նորայ, մեր, ձեր, նոցայ, մեք, դուք, նոքայ, շաղկապով՝ ես և դու:

Թիւ եզակի՝ ես, օգնակի՝ դուք, եզակի՝ իմ, յօգնակի՝ իմոցն:

Դէմք բայիցն է այս, առաջին՝ ես, երկրորդ՝ դու, երրորդ՝ նայ, ես սիրեմ, դու սիրես, նայ սիրէ, այս եզակի է, յօգնակի՝ մեք սիրեմք, դուք սիրեք, նոքայ սիրեն: Հոլովք դերանունան այսպէս՝ սիրել, սիրելոյ, սիրելեալ և այլ ըստ կարգին:

Յաղագս յօդի

Քանի՞ է յօդ: Յօդն է Գ., այսինքն՝ ս, դ, ն: Այսպէս՝ սոյն, դոյն, նոյն կամ այսպէս՝ ցուցական յօդ, այսինքն՝ այս ես, այդ են, այնք են կամ այսպէս՝ սոյն, դոյն, նոյն կամ այսպէս՝ սըմայ, դմայ, նըմայ կամ այսպէս՝ սորա, դորայ, նորայ և այլ:

Առաջինքն կոչին միատառք, և միւսքն՝ եռատառք, քառատառք և այլ:

Հոլով յօդին⁸⁵ է այսպէս՝ սայ, սորա, սօվաւ և այլ:

Յաղագս նախադրաց

Զի՞նչ է նախդիրն: Նախդիրն է այն, որ նախադասի անուանց: Այսպէս՝ զի դու Տէր օգնեցեր ինձ, կամ այսպէս՝ ընդ մեզ Աստուած շրջեցար, ընդ մեղաւորացս, կամ այսպէս՝ ի քեզ Տէր յուսացայ, կամ այսպէս՝ մինչև ի գալուստն Տեառն, կամ այսպէս՝ առաջի քոյ Տէր, կամ այսպէս՝ այս որ է, զոր արար Տէր, կամ այսպէս՝ քանզի դու Աստուած և այլ: Հոլական նախդիր՝ զ, ի, յ, ն, ո, ց և այլ ոչ գոյ բաւ է:

Յաղագս շաղկապի

Զի՞նչ է շաղկապ: Շաղկապն է այն, որ զանուն շարակցէ կամ կապէ ընդ միմեանս: Այսպէս՝ Պետրոս և Պողոս շրջէին և քարոզէին: Այսպէս է [=այսպիսիք] կոչին բաղճիւսական, այսինքն՝ և իսկ, և այլև, նաև, որ և, իսկ և, ոմանք կոչին

⁸⁵ Ձեռագրով՝ «յօթին»:

տրոհականք, այսինքն՝ կամ, կամ թէ, և կամ, կամ և, ոմանք պատճառականք, այսինքն՝ զի, քանզի, որպէսզի, այնու զի, ոմանք կոչին ալլականք, այսինքն՝ այլ, բայց, սակայն, բայց սակայն, այսպէս՝ յիմայ տրոհական, այսինքն՝ կամ աղօթեալ, կամ ընթերցի՛ր, կապակցական, այսպէս՝ ես և դու, պատճառական, այսպէս՝ ուրախ լե՛ր ընդ իս, զի գիտի զգրամն իմ կորուսեալ, կամ այսպէս՝ զի դու Տէր օգնեցեր ինձ և մխիթար[եցեր], ոմանք ալլականք և են այսպէս՝ այլ դու փրկեալ զմեզ ի թշնամոյն կամ այսպէս՝ բայց միայն Աստուծոյ հնազանդ լե՛ր, ա՛նձ:

Յաղագս մակբային

Զի՛նչ է մակբայն: Մակբայն է այն, որ յառաջ բային դնի, որք են այսոքիկ⁸⁶ այսօր, որքան, աստանօր, որչափ, միանգամ: Սահմանի այսպէս՝ ժամանակական՝ այսօր, զոր արար Տէր, քանակական՝ որքան աւուրքդ անցեալ են, այնքան աւուրքդ մեռեալ են, թւական՝ մի անգամ եղև բանըն մարմին, արգելական՝ մի՛ խօսի, մի՛ շնար, մի՛ սուտ վկա[յ]եր և այլն, ոմանք հարցական են՝ է՞ր, վա՛սն էր, ընդէ՞ր, ո՞յր, աղագա՞ւ⁸⁷, ոմանք արագականք են՝ վաղվաղակի, շուտ-շուտ, փոյթ առ փոյթ, շեշտիւ առ շեշտիւ, ոմանք զօրեղականք են՝ յոյժ, կարի, խիստ, յոյժ կարի և այլ:

Յաղագս միջարկութեան

Զի՛նչ է միջարկութիւնն⁸⁸: Միջարկութիւն է այն, որ ի մէջ տրտմութեան և ուրախութեան, այսպէս՝ ուրախ եղէ ես, ի տուն Տեառն ե՛րթ, այսինքն՝ օղէ՛շ: Ոմանք կոչին տնազականք, այսինքն՝ հա՛յթէ եղև, հա՛յ, ոմանք կոչին վայականք, այսինքն՝ ո՛հ, վա՛յ, վո՛ւ, ոմանք կոչին զարմանականք, այսինքն՝ ո՛, ո՛ր, Տէր տես ջրոց, ոմանք կոչին հաւանականք, այսինքն՝ եղիցի՛, եղիցի՛:

[ՄԱՆՐ ՅԱԲԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ]⁸⁹

Որպէս բաժանին անունք, գոյական է վարդ, ածական է հոտով վարդ, դերանուն է, որ փոխանորդ կոչի, յարանուն է, որ իրն մի է և իրն բազում, այսինքն՝ ալ, ջրի ալ, մատանի, թւական անուն է այս՝ Ա., Ժ., Ի., Ը., Զ., Ռ. և այլ, յատուկ, այսինքն՝ Պողոս, հասարակ՝ մարդ, ընդհանրական, այսինքն՝ ամենայն, բօվան-

⁸⁶ Զեռագրում՝ «այսոքիկ»:

⁸⁷ Զեռագրում՝ «աղախա՛ւ»:

⁸⁸ Զեռագրում՝ «միջարկութիւնն»:

⁸⁹ Մասն հատվածական, հիմնականում անխորագիր նյութեր են, որոնք անկանոն, անհետևողական և կամայական հաջորդականությամբ են շարադրված ու հաճախ ընդմիջարկված այլ նյութերով, զբաղեցնում են ձեռագրի 36բ-41բ, 42բ էջերը:

դակ⁹⁰, համա[յ]ն, հաւաքական⁹¹, այսինքն՝ քօմ, երամ, կուտոց, տարածական է, այսինքն՝ հասարակ, վերացեալն է, այսինքն՝ քերականութիւն, թանձրացեալն⁹² է այս՝ քերական, սուրբ անուն՝ քահանայ, կեղտանուն է՝ գող, շնացօղ, կեղծաւոր և այլ:

* * *

Ի քանի՞ս բաժանի բայն: Եօթն, այսինքն՝ ներգործական, կրաւորական, ընդ-միջական, էական, գոյնական, կողմնական, անդէմ: Սահմանայ ինձ. ներգործա-կան, այսինքն՝ սիրեմ, կրաւորական՝ սիրիմ, ընդմիջական, այսինքն՝ ես կերի, ես արբի, հասարակն է, այսինքն՝ արեգակն լուսաւորէ զաշխար[հ]ս, էական է այս՝ եմ, կամ, գոմ, եղէ, գոյնական է այս՝ այրեմ, այրեցի, կողմնական է, այսինքն՝ նստիմ, նստայ և այլ:

* * *

Որպէ՞ս են ածանցեալքն: Գոյական, այսինքն՝ երկնային, նիւթական, այ-սինքն՝ քարեղէն, տեղական, այսինքն՝ գեղացի, նախնական՝ Յօնանեան, տնկա-կան, այսինքն՝ վարդենի, իգական, այսինքն՝ տիրուհի, դասական, այսինքն՝ նա-խորդ, երկրորդ, ստացական, այսինքն՝ պարունական, այսինքն՝ Հայաստան, ծաղկարան, այսինքն՝ հիւրանոց, շատական, այսինքն՝ ծառուտ, օձուտ, ունա-կան, այսինքն՝ շնչաւոր, թեւաւոր, պակասական, այսինքն՝ թեւատ, ձեռնատ, բաղ-դատական⁹³, այսինքն՝ մեծագոյն, գերադրական, այսինքն՝ ձայնեղ, զօրեղ, նւա-գական՝ որդեակ, խղճուկ, մակրդական, այսինքն՝ կղտոտ, ձիթոտ, յարմարական, այսինքն՝ փիլոնացոյ:

* * *

Ի քանի՞ս ժամանակս հրնչին⁹⁴ ձայնաւոր: Յերիս, այսինքն՝ յերկարն, մի-ջակն և ի սուղն, այսպէս՝ ա, ա', ա'':

* * *

Որքանի՞ք են կետադրութիւնք: Երեք, այսինքն՝ վերջակետ, ստորակետ, մի-ջակետ, այսինքն՝ գոյ ևս մի կետ, որ ասի մականկետ, այսինքն՝ որ ի գլուխս գրոց դնի, այսպէս՝ 'ի, 'ե, 'է:

⁹⁰ Ձեռագրում՝ «բովանթակ»:

⁹¹ Ձեռագրում՝ «հաւագական»:

⁹² Ձեռագրում՝ «թանցրացեալն»:

⁹³ Ձեռագրում՝ «բաղտատական»:

⁹⁴ Ձեռագրում՝ «հրնչին»:

Յադագու գրոց

Զի՞նչ է գիրն: Գիրն է մարմին բանի, որ զծածուկ խորհուրդս մեր մարմին զգեցուցանէ:

Զի՞նչ է Իլին⁹⁵ գիրն, որ երկու տեսակ ասացեր, վասն որոյ թէ երբեմն ձայնաւոր և երբեմն բաղաձայն, այսպէս՝ Տիւն այս ձայնաւոր, որ է անուն գրոց, Թիւն այս է բաղաձայն, որ է անուն ցերեկին:

Ոմանք պատիւ ասեն, որ նրստի ի վերայ գլխոյն գրոց: Այսպէս՝ որպէս, Տէր, Աստուած, քանզի ոմանք նման բերեն Քրիստոսի և այսքան:

Զի՞նչ է Յին, այսինքն՝ Յ Յին կոչի: Յառաջադիր, այսպէս՝ յԱստուած, յուսամք, երբեմն կոչի վերջադիր, այսպէս՝ յԱստուծոյ: Գիտելի է, զի որմէ, որ առաջադիր լինի, ձգտեալ⁹⁶ անւանի և յորժամ վերջադաս լինի, քարշեալ յորջորջի իսկ թէ միջադաս լինի, նըստեալ ասի:

Զի՞նչ են ներհակ գրոց: Ներհակ գրոց նման և աննմանք, այսպէս՝ ա և տ, ք և ե, գ և դ, զ և ղ, ս և ո, ք և ֆ:

* * *

Սակաւ ինչ ասելի է վասն նախադրութեան: Ոմանք կոչին զատական, այսինքն՝ ընդ, վասն, ըստ, սակս, զի և ոմանք կոչին բաղադրական, այսինքն՝ ան, տը, ապա, բէ, և ոմանք կոչին հոլովական, այսպէս՝ զ, ըն, ցը, ց, ի, ով և այլ ըստ կարգի:

Յադագու պարագայֆ⁹⁷ գրոց

Քանի՞ք են պարագայքն գրոց: Հինգ⁹⁸ են՝ նախ՝ գրադարձութիւն (ա), գրակազմութիւն (բ), յարմարութիւն (գ), վերծանութիւն (դ), կետադրութիւն (ե):

Նախ գրադարձութիւն, այսինքն՝ յորժամ ի վերջ տողին հասանին գրեանքն⁹⁹, եթէ ձայնաւոր հանդիպի, մինակ դրի ստորակետ, ով այսպէս՝ ա, ի, ե, է, ը, ո, օ, բաղաձայն հանդիպի, զոյգ¹⁰⁰ դնել կամի ընդ ձայնաւոր գրին, թարց ստորակետի, զի ոմանք ստորոտ ենթամնա ասեն կամ ստորոտ:

Երկրորդ՝ վերծանութիւն, որ պարզ և բնական գրով ընթեռնուլ: Այսպէս զջուրն ասել ջուր և ոչ ճուր, զկողն ասել կող և ոչ գող, զքարն ասել քար և ոչ գար, զֆալաքն ասել ֆալաք և չփալաք, զգայլն ասել գայլ և ոչ ֆայլ, որ է գազան և այլ բազում, որք միշտ ի լեզուս կորճէիցն գտանի միշտ, որպէս ռամիկք, այ-

⁹⁵ Ձեռագրում՝ «հիւն»:

⁹⁶ Ձեռագրում՝ «ծգդեալ»:

⁹⁷ Ձեռագրում՝ «պարագայգ»:

⁹⁸ Ձեռագրում՝ «հինկ»:

⁹⁹ Ձեռագրում՝ «գրեանգն»:

¹⁰⁰ Ձեռագրում՝ «զոյգ»:

սինքն՝ մեղաթ Սատուծոյ և ոչ ասեն մեղա Սատուծոյ:

Երրորդ՝ գրականգմութիւն, այսինքն՝ այս բոլոր, այս գլխագիր, նօտրն է այս: Գրականգմութիւն վասն այն ասի, զի գկազմաժ գրոյն գիտենալ պարտին, զնօտրն, զբոլորն և զգլխագիրն, այսպէս՝ ա, բ, գ, դ, ե, զ, է:

Չորրորդ յարմարագրութիւն է, որ զանունն յարմար գրով գըրել, այսինքն՝ սեփական գրով: Այսպէս՝ ջուր և ոչ ճուր, քար և ոչ գար, մարդ և ոչ մարթ, քանզի զխորդ և սեբական ճանաչեն, այսպէս՝ ճանաչել ճուրն է խորթ և ջուրն է սեփական, գարն է խորթ և քարն է սեփական:

Հինգերորդ է կետադրութիւն: Կետադրութիւն է հինգ՝ նախ՝ միջակետ, այսինքն՝ (.), երկրորդ՝ ստորակետ, այսինքն՝ (,), երրորդ՝ վերջակետ, այսինքն՝ (:), չորրորդ՝ մակակետ, այսինքն՝ 'ե, 'է, 'ի, հինգերորդ՝ բուլթ, այսինքն՝ (')¹⁰¹, վասն զի ունի զօրութիւն այսպէս՝ դու նստար՝, դու՛ նստար, դու նստար, դարձեալ այսպէս՝ շընորհեաց զմարմինն՝ Յովսեփայ, շնորհեաց զմարմինն Յովսեփայ՝, առաջինն է մարմին Քրիստոսի, երկրորդն է մարմին Յովսեփայ և այլն:

* * *

Դարձեալ վասն կողմնական և ընդմիջական բային պարտ է հետեիլ, այսպէս՝

առնում	առնուս	առնու
բառնամ	բառնաս,	բառնա
գրեմ	գրես	գըրէ
դառնամ	դառնաս	դառնա
երթամ	երթաս	երթաս [= երթա]
զօրանամ	զօրանաս	զօրանա
էանամ ¹⁰²	էանաս	էանա
ընթանամ	ընթանաս	ընթանա
թուլանամ	թուլանաս	թուլանա
ժրանամ	ժրանաս	ժրանա
իրակեմ	իրակես	իրակէ
լւանամ	լւանաս	լւանա

¹⁰¹ Ձեռագրում այս և նախորդ երեք կետադրական նշանները ներառված են կոր փակագծերում:

¹⁰² Ձեռագրում՝ «էյանամ»:

Դարձեալ յօգնակի՝

խօսիմք	-----	խօսին
խրատեմք	-----	խրատեն
ծիծաղիմք	ծիծաղիք	ծիծաղին
կըրեմք	կըրեք	կըրեն
հոգամք	հոգայք	հոգան
ձայնեմք	ձայնեք	ձայնեն

Եւ աներեւոյթք են այսոքիկ ղօղանջել, ճանաչել¹⁰³, մեռանիլ, յարենալ, նըստիլ, շուտտիլ, քանզի աներեւոյթն դէմ, թիւ և ամանակ ոչ ունի, բայց սահմանն սահմանակին, հրամայականին, ըղձականին¹⁰⁴ և ստորագասականին ունի զդէմ¹⁰⁵, զթիւ¹⁰⁶ և զամանակ:

* * *

Վասն խոնարհմանց բայիցն, որք ամանակաւ վարին: Այսպէս՝ գրեմ, ըստ որակութեան է սահմանական և ըստ ամանակին է ներկա, ըստ սեռին է ներգործական և ըստ դիմին է առաջին դէմ, գրեցի ըստ ամանակին է անցեալ կատարեալ, այսինքն՝ յերէկ, որ անցեալ օրն էր, գրեցի, գըրեալ եմ անցեալ յարակատար, գրեալ էի՝ անցեալ գերակատար: Լանամք ըստ թւոյն է յօգնակի, ըստ ամանակին է ներկա, ըստ սեռին է ներգործական, ըստ դիմին է առաջին դէմն, անցեալ կատարեալ [=յարակատար]՝ գրեալ եմք և այլն ըստ կար[գին]:

Յաղագս¹⁰⁷ հասարակ բայից

Հասարակ բայիցն է, այսինքն՝ ներգործական և կրաւորական: Այսպէս՝ ծնաւ, որ է ներգործական, այսինքն՝ Մարիամ ծնաւ զՔրիստոս, կրաւորական՝ Քրիստոս ծնաւ ի Մարիամայ: Բայց գիտելի է, զի ամենայն հասարակ բայ ունի զհայցական խնդիրն, այսպէս՝ Մովսէս եհար զվէմն, այս ներգործական և կրաւորականն առնու զտրրական, նախդիրն ի, այսինքն՝ վէմն հարաւ ի Մովսիսէ, արեգակն¹⁰⁸ լուսաւորէ զաշխարհ[հ], որ է ներգործական, որ խնդրէ զհայցական

¹⁰³ Ձեռագրում՝ «ճանաճել»:

¹⁰⁴ Ձեռագրում՝ «ըղցականին»:

¹⁰⁵ Ձեռագրում՝ «սղէմ»:

¹⁰⁶ Ձեռագրում՝ «սթիս»:

¹⁰⁷ Ձեռագրում՝ «յաղակս»:

¹⁰⁸ Ձեռագրում՝ «արեգակն»:

հոլով, աշխարհ[հ] լուսաւորեցաւ ի յարեգակնէն, որ է կրաւորական, որ է խնդրէ գտրական հոլով:

Յաղագս հոմանուն, թէ զի՞նչ է

Հոմանունն է, որ անունն մի է և իրն բազում, որպէս՝ ակն: Ահա ակ անուն է ի անւանց մի և իրն է բազում, որպէս՝ ջրի ակ, մատանոյ ակ, սայլի ակ, մարդոյ ակ, այս անուն միայն: Եւ անուն, և՛ բայս, որպէս՝ այրի, ահա այրի մարդ կամ կին, այս անուն և բայ այրի, այսինքն՝ վառի: Միայն անուն, այսինքն՝ այր մարդ և մաղարայ կամ ջրաբեր, այսինքն՝ մարդ, որ զջուր բերէ կամ փայտ, որ ջուրն բերէ այս էր գոյական հոմանուն, և դասական հոմանուն է այս, երկուշաբթի, Գշաբթի, Դշաբթի և այլ:

Յաղագս փաղանունց

Փաղանունն է, որ անուն և իրն ի միասին լինի, վասն զի իրն առնու զանուն և անունն առնուն զիր և երկուք խառնեալ լինի փաղանուն, որպէս սեռն և տեսակ լինի մի անհատ, և անհատն լինի սեռ և տեսակ:

Յաղագս յարանուն

Յար[ան]ունն է ի յոմանց, որ թանձրացեալ¹⁰⁹ և վերացեալ անւանց ծնանին: Որպէս քերականն է թանձրացեալ և քերականութիւն է վերացեալ, որպէս Աստուածն է վերացեալ [= թանձրացեալ] և աստուածութիւն է վերացեալ, զօրն է թանձրացեալ, զօրութիւն է վերացեալ, էնն է թանձրացեալ, էութիւն է վերացեալ: Պիհոռնացիք¹¹⁰ զէնն հոմանուն ասեն, բայց ոչ է հոմանուն, այլ մի ոչ են առ մինն, որպէս բժշկական դեղ, բժշկական գործիք, բժշկական տաժ, քանզի երեքկեան առ բժշկութեան հային:

Յաղագս փակելոյ զբանս

Շարագրեալս այսպէս՝ տո՛ւր զօրութիւն ծառայի քոյ, քակելն է այսպէս՝ քոյ ծառային զօրութիւն տո՛ւր, եւ կեցո՛յ զորդի աղախնոյ քոյ, քակելն է այսպէս՝ զքոյ աղախնոյ որդին կեցո՛յ, եւ արա՛¹¹¹ առ իս նշան բարութեան, քակելն այսպէս՝ զնշան բարութեան քոյ արա՛ առ իս:

¹⁰⁹ Ձեռագրում՝ «թանձրացեալ»:

¹¹⁰ Փիլիսոփայական այս ուղղության (սկեպտիկական) մասին տե՛ս Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, աշխ. Ս. Արեշտոյանի, Երևան, 1966, էջ 2:

¹¹¹ Ձեռագրում՝ «առա»:

TATEVIK MANUKYAN

TER KHACH'ATUR K'URTK'ANTS'I AND HIS GRAMMAR

Key words: Grammar, grammatical term, manuscript, textbook, parts of speech, small additions, phonetics, morphology, punctuation, verse.

The history of Armenian grammatical thought is almost wholly studied. However, some authors and grammars of the late medieval period, also important for the history of Armenian grammar, have remained outside the scope of studies. Such texts can be discovered especially during manuscript description.

The article is dedicated to one of such authors, Khach'atur K'urtk'ats'i, and his grammar. Information about his life and activity is found in a single manuscript, M 8706. It contains complete and fragmentary grammatical and philosophical material, and the author himself is the scribe.

The work is a grammar for tutors of students. It is written in the form of short questions and answers, and the language of the handbook is quite simple and comprehensible. Its structure resembles that of the traditional Greek and Latin grammars. It consists of five sections: letter, syllable, word, sentence, and eight parts of speech. The work also touches questions of phonetics, semantics and morphology of words and word combinations. It contains small sections on spelling and punctuation. The author's main sources are the 17th–18th cc. Latinizing grammars, in particular the one written by Baghdasar Dpir. The material is loosely organized, but we do not regard Khach'atur's as merely mechanical, since in fact he created a new handbook. The article is accompanied by the text of the Grammar.

Khach'atur K'urtk'ants'i lived and worked in the Bayazet region of Erzurum province in Western Armenia. It is difficult to say whether he was a grammarian or just a scribe. However, we believe that this Grammar is noteworthy as a link in the chain of the development of Armenian grammatical thought.

ТАТЕВИК МАНУКЯН**ТЕР ХАЧАТУР КУРТКАНЦИ И ЕГО ГРАММАТИКА**

Ключевые слова: Грамматика, грамматический термин, рукопись, учебник, части речи, мелкие дополнения, фонетика, морфология, пунктуация, стихотворное произведение.

История армянской грамматической мысли в целом изучена. Однако за рамками исследований остались, в частности, авторы и грамматики, представляющие период позднего средневековья, который также важен для истории армянской грамматики. Таковые особенно часто выявляются при описании рукописей.

Наша работа посвящена одному из таких авторов, Хачатуру Куртканци и его грамматике. Сведения о жизни и деятельности автора до нас дошли в единственной, причем автографической, рукописи ММ 8706, содержащей смесь из разнородных грамматических и философских текстов.

Настоящий трактат – это пособие по грамматике для преподавателей, обучающихся учеников. Грамматика написана в виде кратких вопросов и ответов, на достаточно простом и доступном языке. Грамматика Куртканци по структуре напоминает грамматики греко-латинского типа, традиционно состоящие из пяти разделов: буква, слог, слово, предложение, а также восемь частей речи. Она касается также вопросов фонетики, семантики и морфологии слова и словосочетаний, и содержит небольшие разделы, посвященные орфографии и пунктуации. Основным источником автору служили латинизирующие грамматики XVII-XVIII веков, в частности, «Грамматика» Багдасара Дпира. Материал плохо организован, однако мы не считаем работу Хачатура чисто технической, так как он фактически создал новое учебное пособие.

В статье издается грамматика Хачатура Куртканци, жившего и творившего в регионе Баязет провинции Эрзрум в Западной Армении. Сложно сказать, был ли автор грамматиком либо просто писцом; тем не менее, данное пособие достойно внимания как одно из звеньев в цепи развития армянской грамматической мысли.